

զովոյն երկրոց բնութեանց ի միտով անձին վարդապետութիւնը ըստ օրինի երկուց անձանց մոլորութենէն զանազանել, կը շարունակէին (ինչպէս նոյն ատենուան զրուածներէն յայտնի է) նոյն խօսքերը նոյն ըմբռնումներով կրկնելով՝ զորոնք Պրոկղե առ Հայս առամարին մէջ ունէին, իբրեւ թէ ուրիշ բան չունենան առջեւնին՝ բայց եթէ Թէոդորի Մոպուեստացոյ եւ Վեստորի մոլորութիւնը:

Երկօք առ Փառաբանութիւնը մինակ պատարագի՞ մէջ՝ հանգանակը զրուցուած ատեն կը գործածուէր:

Եթէ մեր Հիմնադրուան կիրառութեանը նայինք, այնպէս է. այս ինքն նոյն իսկ երախայացուցման մէջ չենք ըսեր. սակայն կ'երեւայ որ առ խափանումը շատ ժամանակի բան չէ: Անշուշտ առ Փառաբանութիւնը՝ որն որ ըստ ինքեան դաւանութիւն մին է Արարողութեան, մկրտութեան կամ աւելի ճիշդ՝ երախայացուցման ատեն շատ յարմար եւ բնական է: Ա'երեւայ որ Թորիէսթու եւ եւ Ա' կենտոկոյ տպագրութեան մէջ նշովքին հետ՝ առ ալ զանց եղած ըլլարով խափանուած է: Ես զանցառութեան սա առ ի՞նչ եղած է որ զրչապիր Մաշտոցք սովորութիւն չունին հանգանակն ամբողջ ընդօրինակելու, հապա մինակ խորագիր մը կը գնեն թէ հոս պէտք է զրուցել Հաւատամքն եւ անոր Արթր: Ես խորագիրը շատ հին Մաշտոցաց մէջ ալ կը տեսնուի: Աւրիշ կ'նշ կրնայ ըլլալ առ աղօթքը՝ բայց եթէ սոյն Փառաբանութիւնը: Կրօք. մեր ոչ-կաթողիկեայ եղբարց մէջ նոյնը ցայսօր ի գործածութեան պիտ'որ ըլլայ, վասն զի (օրինակի աղագաւ) 1857ին տպուած Մաշտոցին մէջ առ Փառաբանութիւնն ալ հանգանակին հետ նշանակուած է (էջ 18):

Բնագիրն՝ այնպէս ինչպէս վերոյիշեալ երկու Վերահաները յառաջ կը բերեն, է.

«Իսկ մեր փառաւորեացուք երկիր պազանելով որ յառաջ բան զյաւտեանս սրբոյ՝ Երրորդութեանն եւ միասնական՝ աստուածութեանն հօր եւ Որդոյ եւ հոգոյն սրբոյ այժմ՝ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն,»:

6.

Չկաթողիկեայցմե գործածութիւնը:

Եղաւ ատեն որ բողոքականք ճամբորդութիւններ կ'ընէին Երեւելոց կողմերը, որպէս զի ծանօթութիւններ ժողովն կաթողիկէ եկեղեցիէն բաժնուած քրիստոնէից վարդապետութեան եւ

¹ Վերոէս Գ. «սուրբ» ըստ 2-րդ. եթէ հարազատ կամ նախնական ըլլար՝ իսկ ըստ 3-րդ. «սրբոյ»:

² Հիմնադրուան բնագիրը Գ, որն որ

պէտք էր ըլլալ մանաւանդ Գ-ով: